



ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014թ. - 01.09.2015թ համայնքի ղեկավարի կողմից կատարված
աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Կ.ԳԱԼՍՏՅԱՆ



ԲՈՒԺԱԿԱՆ 2015թ.

Հարգելի բուժականցիներ 2014 թվականի երկրորդ և 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

➤ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013թ. դեկտեմբերի 11-ին համայնքի ավագանին իր N44-Ն որոշմամբ ընդունել է 2014 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 32 մլն 017 հազար 600 դրամ, ծախսերը՝ 40 մլն 771 հազար 500 դրամ: Պակասորդը կազմել է 875 հազար 300 դրամ, որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Բուժականի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 3 մլն 057 հազար դրամ: 2014 թվականի հողի հարկը հավաքագրվել է 3 մլն 057 հազար 700 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100.0% -ը:

2014թ. գույքային հարկերը հավաքագրվել են 120.5% -ով, որը կազմել է 2 մլն 458 հազար դրամ, հավաքագրվել է 2 մլն 961 հազար 800 դրամ:

2014 թվականի դեկտեմբերի 18-ին համայնքի ավագանին իր N30-Ն որոշմամբ ընդունել է 2015 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 37 մլն 411 հազար 400 դրամ, ծախսերը 47 մլն 313 հազար 600 դրամ:

Հողի հարկը կազմել է 3 մլն 040 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 1 մլն 200 հազար 700 դրամ, որիը կազմում է տարեկան պլանի 39.4% -ը:

Գույքային հարկերը կազմել են 2 մլն 715 հազար դրամ, որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 1 մլն 122 հազար 900 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 40.6% -ը:

➤ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով և զոհված ազատամարտիկների ընտանիքներին տրվել է 1մլն 075 հազար դրամի օգնություն:

➤ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Բուժականի ուսանողներին տրանսպորտային երթևեկության ուղևարձի նպատակով տրամադրվել է 1 մլն 400 հազար դրամ:

Միջնակարգ դպրոցում գործող նախակրթարանի ապահովման նպատակով 1 հարյուր 50 հազար դրամ:

Ֆուդբոլային թիմին անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու համար հատկացվել է 3 հարյուր 40 հազար դրամ:

Մարզային օլիմպիադայում հաղթող ճանաչված աշակերտուհուն 50 հազար դրամ:

Կանանց տոնի և դպրոցի աշակերտների տրվել է նվերներ 600 հազար դրամի:

➤ **ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից Բուժական համայնքում կազմակերպվել է ծառատունկ, տնկվել են տարբեր տեսակի ծառեր, ջրվում և խնամվում են: Հաճախակի համայնքում կազմակերպվել է շաբաթը մեկ և կատարվել է աղբահանություն:

➤ **ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի կենցաղային սննդի ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման թույլատվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տուրքերի գումարները:

➤ **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքի բյուջեի միջոցներով վերակառուցվել է մանկապարտեզի շենքը որը ներքին հարդարման աշխատանքները կատարելուց հետո կսկսի գործել որպես հանդիսությունների սրահ:

➤ **ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

2014թվականի երկրորդ և 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքային սեփականության հողամասերի օտարումներ տեղի չեն ունեցել: Համայնքային սեփականության արոտներից 1122.36 հա տրվել է վարձակալության: